

**S. ՆԱԹԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ
ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՏՈՆԻՒ
ՄԱՏՈՒՅՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(8 հունիսի 2003 թ.)

«Տուր ինձ ցնծության փրկութեան, և հոգու պետութեան բոյ հասդարեա զիս»:

«Տուր ինձ փրկության ցնծությունը և քո հոգու փերության մեջ հասդարեի ինձ»:

(Սաղմ. Ծ 14)

Այս սահմուքը, որ դարեր շարունակ իրքն աղոթք արդասանվում է հարկապես քրիստոնյա ժողովրդի կողմից, իր մեջ խրացրել է մարդու մեղքի պարբառով դրախտից վարպետությունը և իր ասպարագույն աղոթքը, որ Տերը նորից պարզելի մարդուն փրկության ուրախությունը և իր ասպարագույն հոգու փերության մեջ հասդարեի այն երազանքը մարդկության, որ կապարվեց և իր լուսն սփացավ մեր Տեր Հիսուս Քրիստոսով:

Իր հրաշափառ հարությունից հետո Հիսուս 40 օրեր գեռնս ապրեց Իր աշակերպների հետ, շարունակեց հետիարության Իր առաքելությունը և խոսքացավ նրանց, որ նրանց հետ պետք է լինի մինչև աշխարհի կարարումը, իսկ Նոր մոր Իր համբատնալուց հետո անպայմանորեն նրանք կսփանան մխիթարիչ Սուրբ Հոգին: Ահավասիկ և համբարձումից 10 օր հետո Հիսուսի աշակերպները, ինչպես որ պարվեր էին սփացել իրենց վարդապետից՝ մնալու Երուսաղեմում, վերնափանն աղոթքի պահին երկնքից կրակի պես լեզվակներ իջան նրանց վրա: Սուրբ Հոգին էր այդ, որ փարբեր ազգերի լեզուների կերպով իջավ աշակերպների վրա, և նրանք սկսեցին քարոզել հարուցյալ Փրկչին և մարդկության փրկությունը աշխարհի բոլոր լեզուներով, և Երուսաղեմում գլուխող փարբեր ազգությունների մարդիկ զարմանքով էին նայում, թե ինչ է կապարվում այնպես: Հոգեզալուսպը, Սուրբ Հոգու էջը կապարվեց Հիսուսի հրաշափառ հարությունից 50 օր հետո, որի համար այն կոչվում է Պենտեկոստե, այսինքն՝ հիսույակ:

Այդ օրն էր, որ Սուրբ Հոգին եկավ, և այս օրն է, որ Աստված նորից մարդուն վերցրեց իր հոգու պետության ներքո՝ իրքն հաշդրություն, իրքն փրկություն: Այս օրն էր, որ հիմնվեց Քրիստոսի փիեզերական եկեղեցին, և ինչպես որ Վարդապետը նրանց պարվիրել էր գնալ և ուսուցանել բոլոր ազգերին և մկրտի նրանց Նոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, այսպես աշակերպները սրանալով նաև բոլոր ազգերի լեզուները և կարողությունը նրանց լեզվով նրանց խոսելու, ցրկեցին աշխարհով մեկ՝ փարածելու Քրիստոսի Վարդապետությունը, և այսպես էր, որ աստվածային նախամինամությամբ Հիսուսի երկու աշակերպները՝ Ձադես և Բարդությանու առաջաները, երևի թե սրացել էին Սուրբ Հոգուց հայց լեզուն, եկան Հայաստան աշխարհ քարոզելու հարուցյալ Փրկչին, քարոզելու փրկությունը մեր, և Հայաստան աշխարհում առաջելական քարոզությամբ փարածվեցին քրիստոնեության սերմները,

որոնք Ս. Թաղեասուն ու Ս. Բարդուղիմեասը ոռոգեցին իրենց մարդիրոսական արյամք և նրանց ցանած հոգևոր սերմերը բազում արդյունք պահեցին, և իրենք էլ դարձան հիմնադիր ներք Հայասպամյաց Առաքելական Սուրբ Եկեղեցվու:

Երկու հարյուրամյակ անց Հայաստան աշխարհում հայտնվեց մի նոր Պետրոս, ոչ միայն խոսքով, գործով, այլև իր անապատում փառապանքներով ու չարչարանքներով իր անխայիրելի հավաքը խոսպովանող մի հավաքարիմ վկա: Առաքելազոր մեր մեծ Լուսավորիչը՝ Սուրբ Գրիգորը, իր անսասան հավաքի զորությամբ կարողացավ դարձի բերել հայոց արքային, և հայոց Տրդադ արքան խոնարիկելով ճակապազրի առջև՝ Սուրբ Ավագանի մկրդությունն ընդունեց արքայական ընդանիքի և փրկություն դիմուլով հետ միասին, և երանելի մի օր, երբ ասրվածների Հայրապետը նոր հավաքի կրակը սրբի մեջ վերացած էր աղոթքի թևերով, նրան երևաց Խնճը՝ Միածին Որդին Ասքուծ Լուսե շողակաթումներով և երենեն կերպարանքով երկնքի բարձունքներից իշնելով Հայաստան աշխարհ՝ ուզե ուռով հարվածեց Իր առաջաների արյամք շաղախված հողի վրա, որը և ցոյց տվեց ու հասպատեց Հայաստանյաց Սուրբ Եկեղեցվու հավաքի վեմն ու այդ վեմի վրա որպես կնիք երկնավոր անապականության, որպես նյութականացած անման հիշաբակ Լուսավորիչ լուսենեն փեսիքի, մեր նախնիք կանգնեցրին այս հոյակերպ Շողակաթ Լուս Խորան Սուրբ Էջմիածինը՝ մայրը բոլոր հայ եկեղեցիների: Այդ օրվանից Սուրբ Էջմիածինը դարձավ հայ հավաքի անառիկ բերդը, հավիտենության բանող ճանապարի անշեշ փարոսը, ազադ ապրելու բենջի անխորսակելի հույսը և հայի սպեղծագործ ու շինարար կամքի դարբնոցը:

Սուրբ Մաշտոցն իր լուսարաց աջքերով Սուրբ Էջմիածինի օրինության լոյսի ներքո տեսավ հայոց ուկեղենիկ լեզվի ասրվածարուր նշանները և իր Սուրբ Աջով, որպես նոր կրակ իր ժողովրդին, գծագրեց հայաբառ առաջին խոսքերը՝ «Ճանաչեն զիմասպութիւն և զիրաբ, իմանալ զրան հանճարոյ»: Նոյն խնճը՝ Սուրբ Մեսրոպ վարդապետը, Սուրբ Սահակ Հայրապետն ու նրանց աշակերտները, թարգմանիչ մեծ սուրբերը, անխոնց փրքնության Սուրբ Էջմիածնի կամարների ներք թարգմանեցին Սուրբ Գիրը, այն դարձնելով Ասքուծ շունչի հայաբարբառ մարմնառությունը և անմար ջահը վատեցին հայ դպրության ու գրականության, հիմք դրեցին հայ դպրոցի, որը դարձավ վահան ամրության ընդդեմ նենգադավ ծոլման:

Ազգիս ամենաօրհասական պահերից մենկին, երբ հայի լինելությունն էր որոշվում, նոյն խնճը Վաղարշապարի Կաթողիկեն օրինեց սուրբ Կարմիր Վարդանի «վասն հաւաքոյ և վասն հայրեննեց»: Ավարայրի դաշտում Ս. Էջմիածնի աղոթքով, Լուսավորչի խաչվառով ու լուսաճանան խաչով Սուրբ Անոն Երեցն ու նրա հոգևոր եղբայրները դուրս եկան անագորոյն ոսխիի դեմ, և Վարդանանց պատերազմը դարձավ Հայ Եկեղեցու հերոսացումը և հայ ժողովրդի հավաքական սրբացումը: Սուրբ Էջմիածինն իր պահմությամբ խարսխված այս մեծ ժառանգության պատվանդանի վրա 1700 փարված պատմությունն է հայ ազգի, նրա սպեղծարար կամքի և սպեղծածը պաշտպանելու հերոսության:

Սուրբ Էջմիածին, յուրաքանչյուր հայ երբ լսու է իրեն հարազար այս անոնը, մեկ անգամից հեգու թևերով վերանում է դեսի Հայաստան աշխարհ: Սուրբ Էջմիածին՝ Հայրապետական Մայր Աթոռ՝ նստավայր Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Այսպես է գրնվում Ամենայն Հայոց Հայրապետական լուսավորչահասպար ջահը, և այսինք են գործել, աղոթել և իրենց երկնային վերջին հանգրվանը գրել մեր մի շարք երջանկահիշաբակ հայրապետներ:

Ս. Էջմիածին՝ դպրության օրրան, որ դարեր շարունակ կրթության իրենց ծարավն են հազերել մեր ազգի ուսումնագիտենչ զավակները: Ս. Էջմիածին՝ մշակույթի բազմադարյան մի կենտրոն, մշտարթուն պահապան դարերի ընթացքում հայ հանճարի սփեղծած անկրկնելի ու անգնահատելի արժեքների ու ի վերջո Ս. Էջմիածին հարազար անոն և օրինաբաշխ մի ուխտավայր, որ իշել է ի հրո՛ Քրիստոս Փրկիչը մեր, սրբացրել ու հոգի դպի բազմությամբ գործադրություն այս հոգին:

Արդ, 17 դարեր շարունակ ամեն հայորդի գալիս է ասդրվածակառույց այս կամարների քակ իր հայրերի աղոթքը կրկնելու և նրանց դրսիլքը կիսելու, 17 դարեր շարունակ Հայոց հավաքացյալն այս Ս. Խորանից է հաղորդվում Փրկիչ սուրբ Արյանն ու Մարմնին, բարձրացող խունկի ու մոմի աղերսող լուսի հետ վերառաքում իր աղոթքն առ Ասրված: 17 դարեր շարունակ Միածին Որդու իշման այս սուրբ գինում և Խշման Ս. Խորանին լուսավորչավառ կանթեղը անդադար վառված է մնում: Քրիստոսակիս այս սրբավայրի առջև ամեն մի հայորդի ծունկի է գալիս՝ նորոգելու իր ուխտը և գիտություն մարդություն Ամենակալին, քանզի այսպեղից է փրկության լուսը ծագել ի Հայաստան աշխարհի:

Վեհափառ Տեր, սիրեցյալ հոգևոր եղբայրներ, սիրելի քույրեր և եղբայրներ ի Քրիստոս և մեր ուխտավոր ժողովուրդ, գիտություն և փառք են մաքուցում Ամենակալին և մեր շնորհակալությունն ենք քերում Ձեր Սրբության, որ արժանացրեց իմ անձը՝ համեստ սպասավորիս Հայաստանյաց Եկեղեցվոր, Հոգեգալասպայան մեծ փոնի այս օրը գալու աղոթք մաքուցելու, Ս. Պատարագ մաքուցելու և նորոգելու իմ ուխտը՝ իմ հայրերի կյանքին խառնելով, և հարդկապես գիտություն եմ հայմնում Աստծոն, որ կարծես թե այնպես փնօրինեց, որ ես իմ ուխտը պիտի այսօր նորոգեի, այն օրը, երբ լրանում է իմ քահանայական ձեռնադրության 15-ամյակը:

Մենք այսօր, Վեհափառ Տեր, Ձեր հոգևոր գավակներս, հեռավոր Բրիգանիայից եկել ենք, որպեսզի մեր ուխտի հետ միասին Ձեզ՝ Ամենայն Հայոց Հայրապետին, այսինքն՝ ողջ ազգիս հոգևոր Նորը հայքներու մեր որդիկանան սերը, հավասպելու մեր խորը հարգանքը և, անշուշտ, հասպարելու մեր հավաքարմությունը Ս. Էջմիածնի Աթոռուն և Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետին, և մեր աղոթքն է առ Ասրված մեր ուխտավոր քույրերի և եղբայրների հետ միասին, որպեսզի Տերը անսասան պահի Մայր Տաճարը Ս. Էջմիածնի, Մայր Աթոռը Ամենայն Հայոց և որ պայծառ մնա մեր Եկեղեցին, ինչպիսի պայծառություն որ սպացավ այն օրը, երբ Դիտու իջավ շողակաթումով և հիմնեց այս սրբավայրը:

Մեր աղոթքն է, որ Տեր Ձեր Սրբությանը պարզէի զորություն և ուժ ու կարողություն, որպեսզի Ձեր օրինությունից որևէ հայորդի անմասն չմնա, որպեսզի Դուք կարողանաք հասնել Ձեր բոլոր զավակներին աշխարհի բոլոր ծագերուն: Մեր աղոթքն է, որ Տերն Իր հովանու ներքո պահի մեր ազգը ողջ, մեր հայենաբնակ եղբայրներին ու քույրերին և, անշուշտ, մեր Մայր Հայրենիքն ու Հայրենի պետությունը:

Եվ մենք Վերսպին գիտություն ենք առաքում առ Ասրված՝ փառք և պարիկ մաքուցելով, և թախանձագին աղաջում. «Տեր Ասրված մեր հայրերի, պահապան, Փրկիչ և Առաջնորդ, Ձեռ հովանու ներքո պահիր մեր Եկեղեցին, զահակալին Հայաստանյաց Առաքելական Եկեղեցվոր, մեր Մայր Հայրենիքը և մեր ժողովուրդը թե՛ ի Հայաստան և թե՛ ի Սփյուռս աշխարհի. ամեն: